ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2016թ. N------Ա

## ՈՐՈՇՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆԻ ՇԵՆԳԱՎԻԹԻ ՇԱԽՄԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 23-րդ կետերով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. «Երևանի Շենգավիթի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել «Ռաֆայել Վահանյանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել «Երևանի Շենգավիթի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆԻ ՇԵՆԳԱՎԻԹԻ ՇԱԽՄԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռաֆայել Արտեմի Վահանյանը ծնվել է 1951թ. հոկտեմբերի 15-ին Երևան քաղաքում:

Ռաֆայել Վահանյանը համաշխարհային հռչակ ու ճանաչում վայելող շախմատիստ է, ով դարձել է շախմատի համաշխարհային օլիմպիադայի կրկնակի չեմպիոն և աշխարհի կրկնակի չեմպիոն թիմային հաշվարկում:

1970թ. վերջերից արդեն Ռաֆայել Վահանյանն իր վրա սևեռեց շախմատի համաշխարհային հանրությանը, պարտադրեց խոսել իր բացառիկ կարողությունների մասին:

Հատկանշական է Անատոլի Կարպովի տված գնահատականը. «Ռաֆայել Վահանյանի հետ միշտ դժվար է խաղալ, որովհետև անսպասելի վճիռների և յուրահատուկ իմպրովիզացիաների վարպետ է»:

Ֆիզիկայի ուսուցիչ Արտեմ Վահանյանի ընտանիքում ծնված Ռաֆայել Վահանյանը շախմատ սկսել է խաղալ հինգ տարեկանից, տասնվեց տարեկանում դարձել է դպրոցականների ԽՍՀՄ առաջնության չեմպիոն, իսկ 18 տարեկան հասակում Գրոնինգհեմում կայացած միջազգային պատանեկան մրցախաղում ճանաչվել է հաղթողներից մեկը: Առաջին հաջողություններից հետո սկիզբ է առել Վահանյանի հաղթարշավը համաշխարհային շախմատում, որը շարունակվել է մինչև 1990-ականների սկիզբը:

Միաժամանակ, ներկայացված նախագծով փոփոխություն է կատարվում նաև կանոնադրության 1.1 և 1.10 կետերում՝ այն համապատասխանեցնելով գործող օրենսդրության պահանջներին: Մասնավորապես՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի՝ մինչև 19.01.2012թ. գործող խմբագրությամբ Երևանի ենթակայության կազմակերպությունների կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանման լիազորությունը վերապահված էր Երևան քաղաքի ավագանուն, իսկ 19.01.2012թ. ուժի մեջ մտած օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ այդ լիազորությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

«Երևանի Շենգավիթի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցը» «Ռաֆայել Վահանյանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» անվանափոխելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Երևանի ավագանու անդամ Հ. Թոքմաջյանի, Երևանի քաղաքապետի տեղակալ Ա. Սուքիասյանի և «Երևանի Շենգավիթի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևանի Շենգավիթի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆԻ ՇԵՆԳԱՎԻԹԻ ՇԱԽՄԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Շենգավիթի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆԻ ՇԵՆԳԱՎԻԹԻ ՇԱԽՄԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Շենգավիթի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի էական փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ ____

/կազմված_____2016թ. և բաղկացած՝ 2 էջից/

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«___» _____ 2016թ.

N ___-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

_____ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԿՈՂՄԻՑ 14.12.2015թ.

Գրանցման թիվ՝ 269.215.881863

Վկայական՝ 03 Ա 1031863

ՀՎՀՀ՝ 02264373

14.12.2015թ-ին գրանցված կանոնադրության

Թիվ ____ փոփոխությունը գրանցված է

Իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալության կողմից

«____» _____ 2016թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

ԲԱԺՆԻ ՊԵՏ

_____

«ԵՐԵՎԱՆԻ ՇԵՆԳԱՎԻԹԻ ՇԱԽՄԱՏԻ
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/Փոփոխություն/

ԵՐԵՎԱՆ 2016

«Երևանի Շենգավիթի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության տիտղոսաթերթում և 1.1 կետում «Երևանի Շենգավիթի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Ռաֆայել Վահանյանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

2. Կանոնադրության 1.10 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.10 Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Ռաֆայել Վահանյանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝«Ռաֆայել Վահանյանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ,

ռուսերեն լրիվ՝ “Детско-юношеская шахматная спортшкола Рафаела Ваганяна” общинная некоммерческая организация,

ռուսերեն կրճատ՝ “ДЮСШ Рафаела Ваганяна” ОНКО,

անգլերեն լրիվ՝ Chess sport school for children and youth after Rafael Vahanyan community non commercial organizacion,

անգլերեն կրճատ՝ Chess sport school for children and youth after Rafael Vahanyan CNCO։»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է 14.12.2015թ. պետական ռեգիստրում գրանցված «Երևանի Շենգավիթի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը:

---